ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 26-ից հունիսի 12-ը

Ճապոնիա (ք. Տոկիո, Կիոտո, Օսակա, Կաշիվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Սոսե Ստեփանյան, ՊԵԿ նախագահի խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ճապոնիա, ք. Տոկիո, Կիոտո, Օսակա, Կաշիվա, 2023թ., մայիսի 26-ից հունիսի 12-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

2021-2022թթ. ՀՄԿ Կարիերայի զարգացման ծրագրի բաղադրիչներից է եղել ուսումնական այց Ճապոնիա, որը 2022թ. ընթացքում հնարավոր չի եղել իրականացնել կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, ուստի այն տեղափոխվել է 2023թ: Կարիերայի զարգացման ծրագրի հիմնական նպատակը զարգացող երկրների մաքսային ծառայության ընտրված աշխատակիցների շրջանակում մաքսային գործի ոլորտում կարողությունների զարգացումն է՝ Համաշխարհային մաքսային կազմակերպությունում 10 ամիս աշխատանքային փորձ ձեռք բերելու միջոցով, ինչը ֆինանսավորվում է Ճապոնիայի մաքսային համագործակցության ֆոնդի կողմից: Ծրագիրը նախատեսում է 2 շաբաթով այց Ճապոնիա՝ տեղում ծանոթանալու համակարգի առանձնահատկություններին՝ որպես աշխարհի օրինակելի մաքսային ծառայություն ունեցող երկրներից մեկը:

5. Քննարկված թեմաները՝

Ուսումնական այցի շրջանակներում քննարկվել են մարդկային ռեսուրսների կառավարման, ուսումնական միջոցառումների կազմակերպման առանձնահատկությունները, բեռների մաքսային հսկողության ու ձևակերպման, միջազգային փոստային

առաքումների նկատմամբ հսկողության, մաքսային փորձաքննությունների, ռիսկերի կառավարման համակարգի կիրառման առանձնահատկությունները:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ուսումնական այցի շրջանակում իրականացվել է այց Ճապոնիայի ֆինանսների նախարարություն, այդ թվում՝ Մաքսային և սակագների բյուրո, մաքսային ծառայության ուսումնական կենտրոն, շնագիտական կենտրոն, մաքսային լաբորատորիա, Հանեդայի և Օսակայի միջազգային օդանավակայաններ, բեռների զննության կենտրոն, միջազգային փոստափոխանակման վայրեր, որի ընթացքում ծանոթացվել է Ճապոնիայի մաքսային համակարգի հիմնական առաքելություններին, կառուցվածքին, գործառույթներին, ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքին, ուղևորների հսկողության, բեռների մաքսային ձևակերպման և հսկողության, միջազգային փոստային առաքումների մաքսային հսկողության, մարդկային ռեսուրսների կառավարման, այդ թվում՝ ուսումնական միջոցառումների կազմակերպման առանձնահատկություններին: Միաժամանակ, հունիսի 6-7-ը Համաշխարհային մաքսային կազմակերպություն-Համաշխարհային փոստային միություն գլոբալ կոնֆերանսին մասնակցության շրջանակներում քննարկվել են մաքսային մարմիններ – փոստ համագործակցության շրջանակում առկա մարտահրավերները, դրանց լուծման ուղղությամբ առաջադրվող գործիքներն ու ստանդարտները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ուսումնական այցի շրջանակում ձեռք բերված գիտելիքները և տեղեկատվությունը կօգտագործվի ՀՀ մաքսային համակարգի բարեփոխումների շրջանակում՝ միաժամանակ ընդլայնելով Հայաստան – Ճապոնիա երկկողմ համագործակցության շրջանակները:

Հունիսի 7-ին Համաշխարհային մաքսային կազմակերպություն - Համաշխարհային փոստային միություն գլոբալ կոնֆերանսի շրջանակներում ստորագրվել է Համաշխարհային մաքսային կազմակերպություն – Համաշխարհային փոստային միություն համատեղ հռչակագիրը («Տոկիոյի հռչակագիր»):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Այցի արդյունքում ձեռք բերված տեղեկատվության հիման վրա ձևավորվելու են մաքսային ռազմավարության 2024-28թթ միջոցառումներ, ինչպես նաև անցկացվելու են ուսումնական միջոցառումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

14 հունիսի, 2023թ.